


Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Խիս 5



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՆՐԱՔԻՏԱԿ

ՀԱՆՔԻՍ هانراكيداق HANRAKIDAG

ՇԱՐԱԹԷԱԿԱՆ مجموعة علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Է. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ Ծ. || 31 ՅՈՒՆԻՍԻԱՐ 1904

ՀԱՐՍՆԵՐԳ

206

ԱՌ ՏԻԱՐ ՏԻԱՐ ՆՇԱՆ ԵՒ ԶԱՐԵՀ

ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՇՆՈՐՀԱՇՈՒՔՆ

ՕՐ. ՀԱՅՎՈՒՀԻ Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԵՐ

ՀԱՐՍՆՈՒԹԵԱՆՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ




րգե՛, Բնարդ իմ ursալար,
Պննամ եմ քեզ ծաղիօք դալար.
Բու համար չ'են Աշխարհ հովեր.
Ամպէն, շանթէն դափնիք եմ վեր :

Զիւներուդ տակ բացուի Գարուն,
Անթառամով միտ զարդարուն,
Զայնդ հոգին է հոգւոյ նման
Զուրկ ո՛չ մահ, ո՛չ գերեզման :

Լաւերդ անվեր
Բաւել եմ լուսաներ :

Օ՛ն, քոյ քրքրան, խայտան, ցնձան,
Երգերդ ըլլան Սիրոյդ Ընձան :



Սրգե, Բնա՛ր, դուն մեք նոր Հարս ,
Հարս գեղավարս ,

ՀԱՐՍՆ Ե ՀԱՅԿՈՒԿ
Աղջիկն աղուն ու աղեկուկ .
Զիրովն աղունր Զան Տիրունի
Տան Սրբունի :

Երբ Եստնես Նէ
Կ'ըսես Գեղոյ իսեալն ի :
Հայկուկն է մեք
Խաւսիշեաներ
Ծով ծով աչեր
Կոյս կոյս բիբեր :

Հորիզոնէ ի հորիզոն
Կ'արփաքեւէ նոր Ամազոն :
Հեքը դափնի՝ ուսին վերայ ,
Լուսոյ որայ

Կը շողշողայ :
Ինք դեպ Նդեմն իւր կը խաղայ ,
Ոսկին տեղայ
Տեղայ տեղ բուսն ու շափիւղայ ,
Հարսանեկան նոր նոր ընծայ ,
Նո՛ւն բող ցնծա՛յ :

ՀԱՅԿՈՒԿՆ Է Նուն , աղուն՝ անուն .
Աղունորներուն ունի աղուն .
Երեկ՝ աղջիկ , այսօր՝ նոր Հարս ,
Հարս ոսկեքել ու ոսկեվարս .
Վարսքը սամոյր , դեղձան ծամեր ,
Գլխուն վերայ պսակ բուսեր :
Աղջիկ ըլլալ ու հարս ելլալ ,
Գրկել է հուսկ իւր իսեալ ,
Աղջիկ , ծաղիկն ու գեղեցիկ
Հումանիւն են երկնազդեցիկ .
Տեսե՛ք , ՀԱՅԿՈՒԿՆ որքա՛ն չնաղ ,
Զիրքերն՝ օժիս , լո՛յսն աննուաղ :



Հակասն՝ արժաք նոր Լուսնիայ,
 'Ինմին վրայ՝ Շնորհք կայ.
 Այսերն համակ վարդ կը վառին,
 ՅՇուրքին վերայ համբոյրք քառին:
 Ինքն՝ հրեշակ, լեզուն՝ սոխակ՝
 Մեղրը հոսէ, բուրէ մեխակ:
 Երբ գեղգեղէ, մեզ կըզմայէ.
 Նազանքն ինքն է երբ կը փայէ,
 Ծոցէն՝ շուշան, յասմիկն ուլիկն՝
 Գեղոյ մանեակ ու մեծալեակ,
 Կաթեն որպէս սիրոյ ալեակ:

Երբ կը կարէ, գոգ նկարէ,
 Երբ նկարէ, պատկերհան է:
 Աչքերուն մեջ կոյսը ծայրի,
 Ժպիսիսն մեջ ծաղիկ փթթի.
 Սիւրբ օրքնէն մուշկ կը շնչէ
 Խօսքը վուվու՝ օտարակ մընչէ.
 Ինքն համեստ՝ զինչ մանիշակ,
 Նուրքն ու փափուկն են իւր ճաշակ.
 Բարբառն՝ աղօթք, ձայնը՝ դաշնակ.
 Գիշերին մեջ՝ աչքը լուսնակ,
 Կը բուրէ գոգ, երբ կը խորհի,
 Հիացումն է երբ կը հայի,
 Պաշտումն ինքն է քէ որ սիրուի,
 Սիրքը՝ քնար, աչքը՝ արծուի:
 Հոգին ամբիժ՝ գերբ հրեշակ,
 Կեանքը՝ անոյշ չինչ յիշատակ:

Ո՞վ գեղեցիկ փան մեր ՀԱՅԳԻՏԱԿ,
 Հայկուկն ազուր ու աղեկուկ.
 'Ինչն՝ անաղօս, ա խեղ՝ իր սեր,
 Յոռւոյն ընդդէմ միշտ ի վեր.
 Կ'արեալուսէ երբ զարթնու Նէ
 Երբ գիշեր է Փայլածուն է:
 Կապոյսն՝ յերկին, վնիսն՝ ի լին,
 Պահակերէ երբ լի դահլիճ:



Երբ հագուի՝ կը փայլի
 Լնակին ջինջ հայլի .
 Կը նագի սիրամարգ .
 Բղանցեմ ծաղկե մարգ :
 Տեսեմ բողբոսեմ ետեմ ,
 Ասողկան կապած գոտեմ ,
 Ծիածա՛ն իր մեջքին ,
 Ոսկի երազ քնային .
 Լաշակին սակ ամօրեամ՝
 Վարդի թուփն՝ սօղոմած .
 Բոյրին պէս խնկահոս ,
 Համբ այլ շատ պերճախօս
 ՀԱՅԿՈՒԿՆ է նոր բամբիւ
 Ամենքն ալ ակնապիւ
 Կը դիտեն իր սնդուս՝
 Ծիրանին նետում յուս ,
 Իւր փայլուն մեհեւանդ
 Հօրն , եղբօրն են աւանդ ,
 Իր մայրին պատուական ,
 Ամենուն սիրական :

* * *

Մենք բաժակներն առնունք , Եղբարք ,
 Ու ինքն մեծ փառք .

Լոկ անոնց մէջ սերն ու քերականք
 Զունին պատրանք .

Յոյսն՝ հոն նեղատ , վայելքն հաճոյք՝
 Հոն մեր խնջոյք :

Մարդ՝ կեանքին մէջ կա՞յ աւելի
 Դեպք սիրելի

Բան Աղջիկն՝ հարս , Մանջր փեսայ
 Տեսնել հո՛ւսայ ,

Ուր Յիսուսն իսկ մերթ ի Կանայ
 Սուրբ Սաղիմայ ,

Մարեոյ ջուր գինի ըրաւ ,
 Հրա՛ջք իրաւ ,

Առ սեր Հարսին ու իր Փեսին
 Ի միասին .

Սիրե՛ ուրեմն անգամ Երկինք
 Մեր յարկն յարկինք :

Երջանկութեան ե Ամանոր
 Հարսնութեանն օր,
 Ուր այնքան սերս սիրով ցնծաց
 Որդին Ասուած.
 Գինի՛ խմեց, զուարճացաւ
 Ու մարդ դարձաւ.
 Ու հոն գործեց հրաշքն առաջին,
 Հայր Արարչին:

Հարսը՝ Եւան, փեսան՝ Ադամ,
 Են ինչն անդամ,
 Ունին հիմնել արդ բարեբախտ
 Մի նոր դրախտ:
 Կը կազմէ միշտ մէկ մի Հարսնիք
 Էն Հնճանիք.
 Որպէս կազմեն բաւերը ճառ,
 Ծառերն՝ անճառ:

Տունն Ան քրտ սիրոյն օրան
 Սեղծարան.
 Օ՛հ, Հարսնէտրք, ի խրախճան,
 Ասուածն՝ օճան.
 Մեր խրախճան Հարսնէտրք
 Կ'ոգէտրք,
 Զի Յիսուսն ալ մեր մեջ մնայ,
 Զինչ ի Կանայ:
 Գլուխ գլխի բոյ փափաւն
 Հարսն ու Փեսան.
 Մենք ա՛յ երգենք, երգն հարսնիքին,
 Ե՛րգ բաժակին:
 Հարսնանայն ե արարչանայ
 Ու բազմանայ:
 Հարսնացելոց կեանքն՝ Արարչի
 Ու յոյնակի,
 Մեր բաժակներ՝ անո՛նց կեանքին
 Յո՛յժ բանկազին:

Կարմիր ու ճերմակ գիւնոյ բաժակներ
 Վեր առնենք ու շանք ղնկեր առ ղնկեր,
 Խաչն ալ բոյ առնէ մեր Տէր Տէր Պապան:

Սուրբ Խաչն Յիսուսին ամենուս պաշտպան .
 Պսակ թող հիւսկ արագան Լարոս
 Հարսնացեալքն առնեն թող իրենց Կարոս .
 Աղօթքն ու երգեր ու մեր մաղթանքներ
 Իրենց միութեան յինին վկաներ :

Խաչ մը չե՞ արդեւ մեր կեանքն ամենուն .
 Ձեզմէ ո՛րն ըլլայ, ընդ Փեսան թէ Լուն ,
 Պէտք է քաջ գիտնայ . գիտնա՛ք երկուքդ ալ,
 Խաղաղք պարս է , բանն է խաղք չ'ըլլալ ,
 Աշխարհքն է մի թեւ , մարդեր՝ դերասան ,
 Աշխարհք մեկեք արդ , ձեր դերն ըլլայ յալ ,
 Լաւ ու միշտ օրհնեալ՝ իբրեւ ձեր հալալ .
 Երանի՛ անոնց որ ծափերն որսան .
 Որսացիք այսօր դուք շատ մեր ծափեր ,
 Մեր ծափք ըլլան Ձեզ Երանեաց բանքեր :

Իբր Հարս ու Փեսայ խաղաղն է շատ հեշտ ,
 Բուն գործն է յինեւ այր ու կին պարկեշտ .
 Խաղաղն է քաջի դեպ ի յաղթանակ ,
 Խեղքն է որ շահի ամեն մրցանակ .
 Խեղքն առաքինին , ու ո՛չ թէ մոլորն .
 Եղեք խեղացի , ա՛յս է փնտռելին :
 Այգն ըլլայ իրկուն , գարունը՝ աշուն ,
 Ծուրջ կեանքի ծառին մեր օրեր նախշուն ,
 Թափին չոր տեղն ու մարած արեւ
 Լոկ մնան դաշտ ուսքն արմին վերեւ .
 Օր մ'ալ հարսն ըլլայ մայր , կեսուր ու հանի ,
 Փեսան՝ հայր , աներ ու հաւ ծերունի .
 Ուղեւոր կեանքին ձեր մէն մ'հանգրուան
 Միշտ ընդ յիշատակ թողու օրեան :
 Մարդն յիշատակին մեջ է որ կ'ապրի ,
 Ձեր յիշատակն ալ ըլլայ միշտ բարի .
 Յիշատակ խելքի , յիշատակ սիրոյ ,
 Եւ մէն մի տարի միշտ ընդ ի նորոյ :
 Ձեր այս հարսանեաց հանդիսաւոր օր
 Խնդում հանդեսի ըլլայ Ամանոր :

Ապրիք շա՛ս ապրիք,
 Ծղիք ու ծաղկիք,
 Մնա՛ք արեւ շա՛ս
 Տեսնե՛ք հարսնիք շա՛ս,
 Հարսնիք ձեր թոռանց՝
 Թոռներու թոռանց:

* * *

Օ՛ն, Հայկուկ հիւնայ,
 Դնենք ձեռքդ հիւնայ,
 Հաշարդ հազցնենք
 Հարս քեզենք, ֆողենք :
 Մարգարիտն, ոսկին
 Թափենք քու ոսփին,
 Հե՛ս մեր ծափերուն,
 Հե՛ս մեր երգերուն :

Մենք երգենք, Հայկուկ,	Խաղա՛, միևնախուկ,
Քողդ ա՛յ դիր մեկ դին,	Թեւերդ հովին դին.
Երեսդ մեր դին,	Այգերդ փեսին դին.
Հասակդ նոճի,	Խաղ, պար թող ճօճի.
Մագերդ սաւուր,	Լուսեղեն փրփուր.
Աղջիկդ գոհար,	Հարսն եղար տիպար,
Դեղձանիկն անգին,	Ծնողիդ թոյնին
Վանդակին թուր	Դոր թոյն թաւեցար
Հայրենի կսուր,	Թողուցիր թափուր,
Այլ մեր սիրտ յաւե՛ս	Թեւածեն ֆեզ հե՛ս.
Մեն մի ֆայլիդ տակ	Դողան շարունակ.
Սիրեն Աղբարիկիդ,	Աղուր Զարեհիդ.
Հոգի՛ն Հայրիկիդ,	Հոգի՛ն Մայրիկիդ,
Թե աւս թե վերեմ,	Ամեն կողմերեն :

Թե փյին արեւ, թե այգեր պտղին
 Քեզ շա՛ս սիրական Աղբարիկ Տղին,
 Քեզի անձնուէր Հայրին Մայրիկին
 Մտիկն ու աչկունքն են կարօտագին.
 Երեւե՛կ ՄՕՐԿԱՆԸ՝ որ քերէր է Քեզ,
 Երեւե՛կ ՄՕՐԿԱՆԴ՝ որ Դոր Հարս տեսաւ Քեզ :

* * *

Մնաս բարեա՛ւ , աչ ՀԱՅԿՈՒԶԻ ,
 Չնաշխարհիկդ Արեւնունի ,
 Յարդ օրիորդ դու Պերպերեան
 Եղար թիկին Գարագաշեան ,
 Մաղթեմ լինիս օր մ'աչ նոր մայր ,
 Ու փեսայդ աչ՝ բարի նոր հայր :
 Ապրի՛ք մեկեւեղ , մեկ ծերանաք ,
 Երջանկութեան կեանքին բաժակ ,
 Չ'եսեսեք բնաւ լեղւոյ կայլակ .
 Ձեզ արշալոյս բացուին օրեր ,
 Մայիս ծաղկին ձեր շարիներ :

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Յաջորդ քերթով՝ Քերթողին կսակն առ ՆՈՒՆ ու բաժակա-
 խօսքն հարսանեկան :

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Խորին ու սրտագին շնորհակալութիւններս կը փութամ յայտ-
 նել՝ Պօլսահայ Մամուլի ազնիւ ներկայացուցիչներուն , որոնք
 հաճեցան հրապարակաւ շնորհաւորել աղջկանս ամուսնութիւնը , և
 մասնաւորապէս Մանգումի Պատ . Խմբագրութեան , որ այնքան
 համակիր տողեր նուիրեց հարսանիքի նկարագրութեան , ինչպէս
 նաեւ բոլոր հեռաւոր ու մօտաւոր Ազգականներու , Բարեկամնե-
 րու՝ որոնք անձամբ ներկայ գտնուելով Ս . Պատկի արարողութեան
 և կամ հեռագիրներով , նամակներով իրենց թանկագին շնորհա-
 ւորութիւնները կատարեցին :

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Abricotier — Absinthe

ուան երկար գիշերները, երբ երկրագործները ուրիշ աշխատանք մը չունին, կրնան պատրաստել այս ծածկոցները երկար յարդի շիւղերով ու չուանով: — Երկրագործութեան մէջ ամէնէն վախ-
ցուելիք մէկ բանն է այգիներու սառիլը: Ասոր առաջը առնելու համար լաւագոյն միջոցն է ամբողջ այգիին ընդարձակութեանը երկաթէ թելեր քաշել և վրան յարդէ կամ սէղէ շինուած ծած-
կոցներ ձգել. ասոնք չեն թողուր որ գիշերուան մէջ հողը իր տաքութիւնը կորսնցնելով նոր բուսած ծիլերը սառնին: Այս մի-
ջոցը շատ սուղի կը նստի և յարմար է միմիայն ան այգիներուն որոնց խաղողը շատ ընտիր տեսակէ ըլլալով սուղ կը ծախուի եւ
աւելորդ ծախքերուն փոխարէնը կը հանէ. սովորական այգիներ-
բու համար կարելի է ուրիշ միջոց մը գործածել. եղէգներէ, ճիւղ-
երէ կամ փայտի կտորներէ կէս մէթը տարածութեամբ փայտէ տախտակներ կը շինեն և երկու հատը իրար կը թնցնելով ամէն մէկ
որթատունկի վրայ կը ծածկեն: — Երկրագործի մը համար չբա-
ւեր միայն բոյսերն ու կենդանիներն պատուարելու հոգ տանիլ,
պէտք է մտածել նաեւ իր ազրերը պաշտպանել արեւէն ու մանա-
ւանդ անձրեւէն որ անոնց մէջ գտնուած պարարտացուցիչ աղերը
լուծելով զանոնք գրեթէ անօգուտ նիւթ մը կը դարձնէ: Տիպար
ազարակներու մէջ դիտուած է որ գոց տեղ պահուած ազրը շատ
աւելի արգասաբեր կ'ըլլայ քան թէ բաց օդին ձգած ազրը: Պըզ-
տիկ ազարակներու մէջ ամենէն պարզ ու աժան միջոցն է չուր-
ջանակի ցիցեր տնկել. ազրը հոն լեցնել եւ վրան յարդի ծածկոց-
ներով լաւ մը պատուարել:

Abricotier, Միքանի. — Վարդագգիներու ընտանիքէն, սալո-
բենիի սեռէն ծառ մը որ շատ բարձր չաճիր, ճիւղերը աւելի
լայնքին կը տարածուին, տերեւները հաւկթածեւ կ'ըլլացած ձև մը
ունին, ծաղիկները ձերմակ են՝ բաւական խոշոր եւ տերեւներէն
առաջ կ'երեւին. Պտուղը՝ մեծկակ կ'ըլլայ կարմիրի զարնոզ դե-
ղին գոյնով. անուշահոտ ու հիւթեղ: — Շատ հեղինակներ այս
ծառին ծագումը Փոքր Ասիոյ կը վերագրեն, մինչդեռ ուրիշներ
կը յիշեն թէ Բերիտոսէ 2000 հազար տարի առաջ՝ չինարէն գրքի
մը մէջ Շան-ձայ-Բինկ, խօսուած է անոր վրայ: Առաջին անգամ
Բլինիոսի ժամանակակից Հռոմայեցիները Իտալիոյ մէջ մոցուցին
զայն ուրկէ ամբողջ Եւրոպա տարածուեցաւ: — Միքանին թեթեւ
կրային հողերու մէջ շատ կ'աճի. կաւոտ, ծանր հողերու բնաւ
չյարմարիր: Բազմացնելու համար զայն իր վայրի տեսակին, սա-
լոբենիի կամ կաղնիի վրայ պտուկով պատուաստ (գալիմ ածը)
կ'ընեն: — Միքանիին պտուղը իբր միւրգ հում կ'ուտուի, անով
անուշեղէններ ալ կ'եփեն, ինչպէս նաեւ զօֆետի մէջ կը պահեն:

Absinthe, Օսինդր. — Երկարակեաց բոյս մըն է Բարդածա-
ղիկներու ընտանիքէն. սովորաբար մէկ մէդր բարձրութիւն կ'ու-
նենայ. հոտը կծու և զօրաւոր է, համը՝ դառն ու համեմային:
Տերեւներն ու ծաղկոտած մասերը, գործածութեան համար կը
քաղեն Յուլիսի և Օգոստոսի մէջերը. չորցուելով ասոնք բնաւ

չեն կորսնցներ իրենց յատկութիւնները, Այս տունկով սնանող կենդանիներուն միտք անախորձ համ մը կ'ունենայ: Պահուած հազուատներու կամ դարակներն ալ մէջ դրուելով միջատները, կը հեռացնէ հոնէ: — Օշինդրը բժշկութեան մէջ կը գործածուի իբր մարսողական, ոյժ տուող գեղ, հակաանեմաշին, տենդադեղ: Ասով կը պատրաստեն նաեւ ոգելից ըմպելի մը, զտոցի մը մէջ քսան և չորս ժամ թրջոց կը ձգեն 16 լիտր ալքոլ, 2 ու կէս քիլո չորցած օշինդր, 2 քիլո ծեծած անանաս, 500 կրամ չորցած զոպայ (զուծա) և նոյնքան ալ չորցած պատրինջ, Յետոյ վրան կ'աւելցնեն 15 լիտր ջուր ու կը գտեն կէս առ կէս: Յառաջ եկած հեղուկին կը խառնեն 40 լիտր ալքոլ և 45 լիտր ջուր և կը թողուն որ մրուրները յատկը իջնան: Օշինդրը կը գունաւորեն քառամէլով կամ քրքումով, և տարբեր համեր կուտան զանազան իսկութիւններ աւելցնելով, Այսպէս պատրաստուած ըմպելին քիչ չափով գործածուելով օգտակար կրնայ ըլլալ առողջութեան, սակայն երբ չափազանցութեան տարուի՝ պատճառած գինովութիւնը ամբողջապէս կը փնացնէ մարդուն ֆիզիքական ու նիւթական կարողութիւնները:


Absolu, Բացարձակ. — Բացարձակը կ'ընդգրկէ ինչ որ կայ իր մէջ եւ իրմով՝ բոլորովին անջատ ծառայ ու եւ է պայմաններէ և նկատումներէ: Անջատումի ուղու ծուծն է սա՛, ընդհանրացումին իսկութիւնն ու յանգումը: Շատերու համար Բացարձակը նկատուած է ինչպէս Գաղափարը, Ճշմարտութիւնը, իբր հիմնական սկզբունքն ուրիշ կը ծագին միւս սկզբունքներ, ինչպէս որ էն սկիզբն ու պատճառ է բոլոր գոյութիւն ունեցող բաներուն: Մինչդեռ ուրիշներու համար Բացարձակը ցնորք մը, սուտ գաղափար մըն (Համիլթըն), պարապ ծանօթութիւն մըն է (Ռերնուլլիէ), Այս տարբեր նկատումները յառաջ կուգան Բացարձակին տրուած սըխալ սահմանէն որով չեն դիտած թէ ան պիտի արտայայտէր ու իբր նպատակակէտ ունենար յարաբերութեան հարց մը որ՝ ամէն պայմանէ բոլորովին անկախ ըլլալու տեղ՝ անկախ պիտի ըլլար իբր այդ յարաբերութեան եզր առնուած պայմանէն դուրս ուրիշ ամէն նկատողութենէ: Օրինակի համար՝ երկու երկուք ալ՝ չորս կ'ընէ. Ամբողջը իր մասէն աւելի մեծ է, Ահա Բացարձակներ որոնք գոյութիւն ունին անկախ ամէն նկատումներէ ու պայմանէ, քանի որ միշտ երկու միութիւններ՝ երկու նման միութիւններու աւելցուելով չորս միութիւն պիտի կազմեն և կամամբողջին չափը որքան ալ մեծ կամ փոքր ըլլայ, իրեն մասը միշտ իրմէ պզտիկ պիտի ըլլայ, — Այս նկատառումով պիտի բաւէ Բացարձակը անջատումի սոյն սահմանին մէջ դնել՝ անոր կարելութիւնն ու սահմանը պահելու համար խորհուրդի շրջանակին մէջ: Այն ատեն խնդիր չմնար վիճելու թէ Բացարձակը գոյութիւն ունի՞ թէ ոչ ինքնին եւ իր մէջ՝ իբր էութիւն մը. (Տեաք, Սքինօգա, Տեյնիկ) և կամ թէ միտքը կրնայ Բացարձակին Գաղափարէն անոր գոյութեան թափանցել (Քանդ). հապա կը մնայ հասկնալ թէ Բացարձակը կը նշանակէ ինչ որ կայուն, անփոփոխ և անհրաժեշտ

Absorption

noilqroaA

էրբերու մէջ եղած այս ինչ կամ այն ինչ յարաբերութեան մէջ գտնաւորներու միջեւ գտնուած սա կամ նա յարաբերութեան մէջ:

Absorption. Մծում: — (Բնապատմ.) Բոյսերու մէջ սննդատու նիւթերու ծծումը կը կատարուի մզումի օրէնքով: արմատին այն մասերուն միջոցաւ որոնք Մծող Մազերով ծածկուած են: Այս նիւթերը նախապէս ջուրի մէջ լուծուելէ ետքն է որ կը ծծուին: անոնք որ անլուծելի են՝ նախ կը լուծուին արմատին արտադրած մէկ թթուին մէջ եւ յետոյ ջուրի մէջ: Տունկերու տերեւներն ալ օդին մէջէն կը ծծեն ածխական թթուն եւ ջրաշոգին: — Բնա-
խօսութեան մէջ այս բառը կը նշանակէ այն երեւոյթը որով սը-
նուցիչ հեղուկը՝ գործարաններու հիւսուածքին մէջ կ'անցնի: Նա-
խակենդանիներու քով սննդատու նիւթերը ուղղակի բջիջներու մէջ
թափանցելով հարկ եղած փոփոխութիւնները կը կրեն ու կը խառ-
նուին նախանիւթին որ բջիջը կը լեցնէ: Ներքնամակարոյծ կեն-
դանիներու քով, ինչպէս Երիզուրը, Մծող գործարանները՝ արտա-




քին վերնամաշկին բջիջներն են՝ որոնք ստամոքսին պարունակած սննդատու հեղուկներուն հետ հաղորդակցութեան մէջ են: Ա-
տոնցմէ զատ ֆնացեալ բոլոր կենդանիներու քով ծծումը կը կա-
տարուի մարսողական խողովակին վերջին ծայրին վրայ ուր կը հա-
ւաքուին սնունդները մարսողութեան անհրաժեշտ հիւթերուն ներ-
գործութիւնը կրելէ ետք. հոն գտնուած վերնամաշկային բջիջ-
ներն են որ այդ պաշտօնը կը կատարեն եւ ծծուած հիւթը կը
տարածեն ամբողջ մարմինին մէջ արեան միջոցաւ եւ կամ բջիջէ
բջիջէ իրար հաղորդելով: Մծումը արագացնելու համար կենդանի-
ներու աղեաց վերջին մասին ներքին մակերեսը ծածկուած է մի-

Absorption

absorption

լիոնաւոր պզտիկ ցցուածքներով (սե'ս պատկեր), ասոնցմէ իւրաքանչիւրին վերնամաշկին (Ա) տակը կայ արեան խողովակներու հարուստ ճիւղաւորում մը (Դ. Ե), այս արիւնին հետ կը խառնուի սնուցիչ նիւթին ջուրը, բնասպիտը, ոչ ճարպային մասերը: Իսկ այս ցցուածքներուն կեղւոնը կը գտնուի մամացաբեր (Բ) խողովակի մը գլուխը որ կապուած է անհամար փոքր ու անգոյն խողովակներու ցանցի մը. այս խողովակներու մէջ կը գտուի ճարպը, որ աղիքներու աւշային խողովակաց միջոցաւ կը հասնի երակներուն եւ անկէ սրտին:

(Բնաշուծ.). — Երբեմն բնաշուծութեան փորձեր կատարելու ժամանակ, երբ ապահովութեան խողովակ չեն գործածեր, յառաջ կուգայ երեւոյթ մը որ կրնայ վտանգաւոր դառնալ: Ենթադրենք որ ապակեայ եղջերակի մը մէջ ԲՈՐԱՔ ՏՐ ԲՈՐԱՍ տաքցրնելով թթուածին պատրաստել կ'ուզենք եւ ենթադրենք որ գործողութեան միջոցին կրակարանը մարի առանց մեր գիտութեան. եղջերակին մէջի կազերը պաղելով անոնց ծաւալն ու ոյժը



պիտի չնուազի, եւ մթնոլորտական ճնշումին ազդեցութեան տակ թթուածինը հաւաքուելիք ամանին մէջի ջուրը պիտի բարձրանայ եղջերակին մէջ. այս ջուրը որ պաղ է՝ պիտի խորտակէ ապակեայ եղջերակն որ տակաւին տաք նիւթեր կը պարունակէ իր մէջ. կրնայ ըլլալ որ վտանգաւոր պայթում մըն ալ յառաջ գայ տարբեր փորձերու ժամանակ: Ասոր առաջքն առնելու համար թըթուածինը տանող ապակեայ խողովակին մէջտեղէն կ'աւելցնեն վէլ-թէրի ապահովութեան խողովակ մը (Խ), որ երկու անգամ ինքնիր վրայ ծռած է եւ ալ ճիւղին վրայ լայնկէկ ուռեցք մը ու ձախին ծայրն ալ ձագար մը ունի: Փորձին ժամանակ այս խողովակին մէջ քիչ մը ջուր կը լեցնեն, գործիքին ներքին մասը արտաքին օդէն անջատելու համար: Երբ երկու կողմի ճնշումներն հաւասար են, ջուրը նոյն բարձրութիւնը կ'ունենայ երկու ճիւղերուն մէջ ալ. իսկ երբ վառարանին կրակը մարելով եղջերակին մէջի կազերը պաղին եւ ճնշումներն նուազի, այն ատեն արտաքին օդը կը ճնշէ ջուրին վրայ և զայն խողովակին ուռեցքին մէջ մղելով կ'անցնի եղջերակին մէջ՝ հաւաքիչ ամանին ջուրը տակաւին հոն չհասած:

ՄԱՆԿԱԿԱՆ ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՄԿՕՅԻ ՀԱՇՈՒԵԿՇԻՈՐ

(Շարունակութիւն 4րդ թիւէն)

ՏԵՍԻԼ Գ.

ԳԱՐԵԳԻՆ, ԲԱՐԹՈՂ, ՍԵՆԵՔՅԵՐԻՄ ԵՆ ՆՈՐԱՅՐ

Գար. — Ինչո՞ւ արդեօք այսօր հայրիկը ուշացաւ, մանաւանդ որ ամէն մարդ կաղանդի առթիւ շուտ տուն կը վերադառնայ:

Բար. — Թերեւս մեզի համար գնուելիք հանդերձեղէններուն ու կաղանդի պատրաստութիւններուն համար կ'ուշանայ:

Նոր. — Որչափ բարի է նոր տարին, եղբայր, եթէ ան դաւուր չըլլար, միշտ հինցած ու պտտուած հանդերձներով ու կօշիկներով պիտի մնայինք: Նոր տարին է մեզի նոր բաներ բերողը, չէ՞:

Գար. — Անանկ է, Նորայր, անունդ Նոր այր ըլլալուն համար նոր տարին քեզի շատ հաճելի ու բարի կ'երեւի. սակայն կը խորհի՞ս թէ հայրերնիս աղքատ է, որքան կը նեղուի, եթէ հաճուած ըլլայինք, ամէն ստեն նոր տարի կ'ըլլար մեզի համար:

Սեն. — Այո, եղբայր, մեր դրացին, Սարգսենց Լեւոնիկը ամառն ալ նոր լաթեր կը հագուի:

Նոր. — Որչափ պիտի ուրախանանք երբոր նոր կօշիկներ ունենանք: Գիտէ՞ք շատ անգամ պտտցնել չէր տաներ հայրիկը մեզ: Հին տարին հետ հին վերարկուս ալ պիտի նետեմ:

Գար. — Ուրիշ նետելիք բան մըն ալ կայ, որ շատ հին է, տարիներէ ի վեր մեր վրայ կը կրենք, եւ նետել բնաւ չենք խորհիր:

Սեն. — Ի՞նչ է ան, խաչի գնդակս է ան զոր չեմ նետեր:

Գար. — Չէ', չէ':

Նոր. — Հասկցայ, հասկցայ, մենք բնաւ չենք նետեր մեր գրքերը, որչափ ալ որ հինցած ըլլան:

Գար. — Նախ սխալհասկացողութեան կը տարուիք, իմ ըսածս մեր քիչ մը տղայամիտ բնաւորութեան ակնարկել կ'ուզէր: Մեր մոլութիւններն են քորս բնաւ չենք ուզել նետել հին հանդերձներու պէս:

Բարթոլ. — Է՛հ, դուն ալ, սա կաղանդի օրը զուարթ խօսելու տեղ պատուելիի պէս քարոզ տալ սկսար. դուն ըսէ թէ ձմեռը հասեր է, դուրսը ինչ աղուոր ձիւն կը տեղայ, թէ երբ գնդակ պիտի խաղանք:

Գար. — Ատոնք կ'ըլլան արդէն, խնդիրը բարի ըլլալուն վրայ է: Դուռը կը զարնուի, Սենեքերիմ, գնա՛ բաց:

Բարթ. — Հայրիկը ըլլալու է, նայինք մեզի ի՞նչ բերած է. (Սենեքերիմ ծրար մը եւ նամակ մը առնելով կը վերադառնայ)

Սենեք. — Տղայ մը այս ծրարը և նամակը տուաւ ու գնաց, ի՞նչ է արդեօք մէջինը. բռնանք, նայինք:

Գար. — Չէ՛, չբանանք, հայրիկը ռսած չէ՞ որ առանց իր հրամանին պէտք չէ խառնել իրեն չվերաբերող բան մը:

Նոր. — Ի՞նչ կրնայ ըլլալ արդեօք այդ ծրարը, թերեւս մեր հանդերձներն են: Արդեօք ի՞նչպէս են, բանայինք:

Գար. — Առայժմ հետաքրքրութիւնդ կրնաս ենթադրուիլ թիւններու շարքով մը գոհացնել:

Բարթ. — Ահա՛ նորէն դուռը կը զարնուի. ասի հօրս բախումին կը նմանի: (Ամենք մեկեկ կ'երթան բացալու դուռը):

Ամենք. — Հա՛յր ինչո՞ւ ուշացար, ո՞րչափ սպասուցիր մեզի:

Հայր. — Տղաքներս, այսօր տարեգլխի առթիւ հաշիւներ ունէի մաքրելու, նաեւ քիչ մ'այ շուկան պտտեցայ կաղանդի տեղանին համար: (Նետ կուգան): Ի՞նչ է այդ ծրարը, որմէ՞ է այդ նամակը, տո՛ւր նայիմ:

Նոր. — Տղայ մը բերաւ, հայրիկ, ծրարը բանա՞նք:

Հայր. — Չէ՛ տղաս, կեցիք որ նամակը կարդամ: (Կը բացայ նամակը եւ կարդացած փշոցին երբեմն ընդհատումներ կ'ընէ ու կ'այլալի, որուն կը ճիշդէր արտաբերելը զարմանքի ապշուրդով մը)

Հայր (նամակը վաղցայնիկ ետք). — Գացէ՛ք սեղանը դրէ՛ք:

Գար. — Ո՞րմէ է նամակը, հա՛յր:

Հայր. — Վերջը կ'իմանաք, հիմա գացէ՛ք: (Կ'երթան ամենքն ալ եւ ինք ծրարը բացալով կը մտնի) Ի՞նչ հակընդդէմ զգացումներ մէջս կը խաչաձեւեն. Նոր տարիի և հին տարիի զիրար միացնող այս միջակէտին վրայ երկու հակադիր դէմքեր կը գրծուին աչքիս առջեւ: Աղայիս՝ այս անվայել, անգութ, հրէշային արարքէն ու սրտիս անպատում կսկիծներէն՝ իբր եղբակացութիւն համոզուած էի թէ աշխարհիս վրայ ա՛լ գութ, մարդասիրութիւն, սէր բառերը անտիպ, վերացիկ բաներ են: Բարոյական աշխարհ ըսուածը ցնորք մը կը մտածէի, սակայն այս թղթի կտորը, պատգամի մը պէս ամէն կարծիքներս ու յախուռն վճիռներս ցրեց և հարուած տուաւ բոլոր անհաւատ, սեւ խորհուրդներուս:

Այո՛, իրաւամբ կայ սէր, կայ Աստուած, կան սրտեր որոնք ուրիշներու համար ալ կը բաբախեն: Ինչ արտայայտութիւն կարեկցող սրտի մը, ինչ երկնային, շնորհալի, փափուկ ոճ, ինչ համեստուկ գրուածք՝ հակառակ քիչ մը առաջ լսած բիրտ ու կոշտ հայհոյանքներու: Բայց սա ծրարին պարունակութեանը գալով. ինչպէս գուշակեր է մեր անհրաժեշտ պէտքերը: Սա կօշիկը Բարթողին, սա ալ Գարեգինին, ասիկա Սենեքերիմին ու աս ալ չարածճի Նորայրին: Նոյնպէս սա տարազները, ամէն մէկին յարմար, ինչքան վայելչօրէն պատրաստուած են: Թող իրենց կեանքին մէջ շնորհքով զգեստ մը վայելեն: (Տղաբ կը դառնան, ու կը յայտնեն կերակուրի սեղանին դուրիւ):

ՏԵՍԻԼ Դ.

ՉԱՅՐՄԱՅՐ, յետոյ ՄԿՕ, ՃԱՆՕ, ՍԷԿՔՕ ԵՒ ՄԱՐԿՈՍ

Չայրմայր. — Հազար ինն հարիւր եւ երեք տարին
Ա՛հ, ինչքան ալ շուտ առին ու տարին.
Հին տարւոյն հասած ահա կատարին,
Վաղը ձեռք պագնել կ'երթանք կատարին:

Մկօ (Ներս մտնելով). — Է՛հ, ի՞նչ կաղաս կոր նորէն, ոտա-
նաւորճի, ձգէ՛, մարդ եկաւ:

Չարմ. — Ահա տարի մ'ալ, ո՛հ, մեզմէ անցաւ
Ոմանց վիշտերով եւ ոմանց անցաւ.
Գնաց հին տարին մտաւ իր անձաւ

Մկօ (Ընդհատելով). — Եւ մեր օտաւն ալ ախոռի դարձաւ:

Չարմ. — Օ՛ք, դուն ալ Մկօ, Մուկի պէս քնով
Ամէն բանի մէջ կը մտնես փութով,
Զես թողութ երթէք, որ հին տարւոյն հէք
Կարգամ տիրական
Մի դամբանական:

Ճանօ. — Մենք ալ եկած ենք հոս, Պատ, Չայրմայր, որ քու
դամբանականդ լսենք:

Չարմ. — Եւ նոր տարւոյն ալ
Պէտք է ինձ փութալ
Բարի Գալստեան
Հիւսել ներդողեան:

Սեկֆօ. — Այս որքան խեցգետնի պէս եան եան կը քալես,
Պայվելի:

Մարկոս. — Չե՞ս գիտեր, Սէկքօ աղաս, ոտանաւորի մէջ ա-
սոր յանգ կ'ըսեն:

Մկօ. — Ոսկիի՞ հանք թէ ածուխի:

Ճանօ. — Չէ՛, քու գլխուդ դատարկարանութեան հանքը՝

Չարմ. — Գտա՛յ, գտայ, նոր յանգ մ'ալ գտայ :

Մկօ. — Կէսը ինծի, Չարմայր :

Սեկֆօ. — Կեցի՛ր, Մկօ, տեսնենք ի՞նչ է գտածը :

Չարմ. — Երկինքէն առատ ծիւն, անծրել տեղան.
Հայրիկն հետն առած մէկ հատիկ սղան,
Սարքելու համար Կաղանդի սեղան,
Խանութէ խանութ մէկտեղ կը սղան :

Մկօ. — Սողա՞նն է հանքը, մեր պարտէզին մէջ սողանն ալ
շատ, սարմըսագն ալ շատ :

Մարկոս. — Տղա՛ք, ալ շաղակրատութիւնը ձգենք, վաղը
նոր տարի է, քիչ մը լրջութիւնով խօսինք :

Մկօ. — Սա լրջութիւն ըսուածը ի՛նչ է, այդ տեսակէն ինծի
կէս օխա կուտա՞ս.

Սեկ. — Իրաւ է, Մկօ, այսօր գիտես եա, ընդհանուր մարդ-
կութեան հաշուեկշռի օրն է :

Չարմայր. — Վաճառական, արհեստաւոր
Հարուստ, աղքատ, մեծաւոր
Դատաստանի կ'եննարկեն
Իրենց գործերն ապաքէն :

Մկօ. — Իրա՞ւ, եկէ՛ք, ուրեմն, մեր ալ հաշիւը մաքրենք սա
խռժած տարիին հետ. ինծի թուղթ գրիչ մը, որ պատրաստեմ
այս մէկ տարուան հաշուեկշիւը :

Ճանօ. — Հաշուեկշիւ չէ, այլ հաշուեկշիւ ըսէ ասոր :

Մկօ. — Ի՞նչ տարբերութիւն, եթէ հաշիւին կշիւը, օխան,
դրամը կրնայ ըլլալ, ինչո՞ւ տալիքի, առնելիքի կուր չըլլայ :
Ի՞նչ կ'ըսես, պայվելի. այս իմին հայկաբանութեանս :

Չարմայր. — Կեսնքը արդէն մի հաշիւ ու կուր է,
Դիւրսորդոր, կարծես սոսկ մի խուր է.
Ամենայն մարդ հաշիւ ունի իր համար,
Ձոր պիտի տայ դատաւորին անայառ :

Մկօ. — Տեսա՞ք, մինչեւ իսկ ոտանաւորս հաստատեց խօսքս :
Բե՛ր, բերնիդ տակովը պագնեմ պայվելի Չարմայր. համբոյրնե-
րուս յարմար, դուն ինձ եղիր հայր՞մայր. էես ձգող ջրլամ քեզ
համար. — Կը տեսնէ՞ք, սէրը ոտանաւոր է, երբեմն եռոտանի
երբեմն չորքոտանի : Չեմ գիտեր, մեր բանաստեղծներէն մէկն
ալ, իրաւամբ, կ'ըսէր թէ Ադամ առաջին անգամ՝ Դրախտին մէջ
Եւային հետ ոտանաւոր խօսեցաւ :

Մարկ. — Ադամին լեզուին ի՛նչ ըլլալը լսած չէի, սա-
կայն ոտանաւոր ըլլալն ալ այսօր կը լսեմ. Տէր Աստուած. այս
անցաւոր ու յանցաւոր աշխարհին մէջ թիզ մը հասակովս դեռ
ինչե՞ր պիտի թիւնեմ սա խառնիճաւանճ խելապտուկիս մէջ :


Բայց Մկոն իր հաշուեկշիռը պիտի պատրաստէր, ա՛ն նայինք մատիտ և թուղթ :

Մկո. — Կը տեսնէ՞ք, պարապ տե՞ղը Մարկոս աւետարանիչին ըսեր են. թուղթը գրիչը քովէն անպակաս չըլլար : Տո՛ւր, նայինք, սա հաշիւնիս մաքրենք որ առնելիքի, տալիքի խնդիր չունենանք հին տարիին հետ : (Անկիւն մը քաշուելով կ'սկսի գրել) :

Սեկ/օ (Գովիքին կամաց մը). — Աղէկ բերանը ոսկոր մը նետեցինք, թէ ոչ դեռ շատ մտիկ ընելու գլուխ պէտք էր : (Բարձրաձայն) Հիմա, բարեկամներ, մինչեւ որ մեր Մկո աղբարը մուկի պէս անկիւնը քաշուած իր գործը կարգադրէ, մենք ալ քիչ մը խորհրդակցինք հին և նոր տարիի առթիւ :

Մկո. — Այո՛, դուք ալ կատուի պէս իրարու երես ճանկեցէք :
(Շարունակելի)

Հիմա — Մկո



ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

ՅՈՒՍԱՀԱՏԱԿԱՆ ԱՆՁԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ալպեաններու ստորոտը, Զուիցերիոյ գիւղերէն մէկուն մէջ ծնած և մեծցած էի : Արծիւները իրենց բոյները կը շինէին պառեխներու վրայ, ես եւ ընկերներս շատ կ'զրօսնուինք և երբեմն ալ ծախսելու համար բաւական դրամ կ'ունենայինք անոնց հակիթները հաւաքելով :

Գահավէժ ժայռերու վրան ելլելով, մեր խումբէն ոմանք մեզմէ մէկը չուանի մը միջոցաւ մինչեւ բոյնին քովը կը կախէին : Այս արկածախնդրութեան համար յաճախ ես կ'ընտրուէի : Անգամ մը մահուընէ հազիւ թէ ազատեցայ. երբ ծեր արծիւներէն մէկը վրաս յարձակեցաւ : Ձագերը դեռ նոր ելած էին և մայրը մասնաւոր կատաղի էր ինծի դէմ, եթէ իմ զօրաւոր գաւազանս չըլլար, ան իմ գործս լմնցուցած պիտի ըլլար :

Կէս օրէ մը վերջ ժայռերուն մէկէն կախուած կը տատանէի, ընկերներս հարիւր ոտքի չափ չուան իջեցուցած էին հասնելէս

առաջ այն տարածանման ժայռին ուր հաւկիթները կային, Բոյնր բաւական ներսն էր, եւ ես անոր աւելի շուտ հասնելու համար ինքզինքս ազատեցի չուանէն և սողացի խուժին վրայ:

Այժմ եթէ խորհէի կրնայի յիշել որ խուժերը երբեմն կը ճեղքուին և կ'իյնան: Բայց իմ բոյնը հասնելու ջանքիս մէջ չէի կըրնար կենալ եւ նկատի առնել այս տեսակ պատահականութիւն մը:

Վերջապէս հաւկիթները առնելով վերադառնալու և չուանը բռնելու պատրաստուած ատենս ակամայ վար նայեցայ. վայրկեանաբար սարսափէս արիւնս գրեթէ սառեցաւ և յստակ կերպով նշմարեցի որ ոտքիս տակ խուժին մէջ երկար ծերպ մը կար, այս ծերպը արագաբար լայն ճեղքի մը կը փոխուէր: Խուժին փշրուելու վրայ ըլլալուն սոսկալի ճշմարտութիւնը պարզուեցաւ առջեւ, զիս չուանէն հեռու պառելիին խորը ձգելով և առաստաղի պէս երկնցող ժայռերով չուանէն քսան կամ երեսուն եարտա զատելով:

Իմ խորհուրդներս ժողվել կարենալէ առաջ անխուսափելին տեղի ունեցաւ, ժայռին մեծագոյն մասը կտրեցաւ և լեռան կողմն ի վար թաւալելով գնաց սոսկալի շառաչիւնով մը:

Վայրկեանի մը համար խելակորոյս եղայ, զգայարանքներս գործելէ դադրեցան, վիճակս հասկնալը ջլատեց զիս, և ինծի օգնութիւն հասցնել անկարելի ըլլալը ըմբռնեցի: Սարսափս աւելցաւ երբ յիշեցի որ մայր արծուին ճանկերուն մէջ պիտի ըլլայի եթէ նա յանկարծ վրաս խոյանար:

Ժայռին ցուրտ պատը կռնակս կը ճմլէր, վարը անդունդը իր բերանը կը բանար: Յանկարծ Աստուածաշունչի հատուած մը զօր մայրս ինձ սորվեցուցած էր միտքս ինկաւ «Ան չպիտի հանդուրժէ որ քու ոտքերդ սահին»:

Այս հատուածը զօրացուցիչ դեղի մը պէս ազդեց: Յոյսը վերադարձաւ ինձ, թէ և յուսահատ էի սակայն հանգստացայ, զգացի թէ քանի որ կեանք կար յոյս ալ կար:

Վար նայելէ խնամքով զգուշանալով ամէն կողմէ իմ դիրքս ուսումնասիրեցի: Նեղ ժայռին վրայ տեղ մը նշմարեցի ուր հովը հասնելու աստիճան մօտ կը քչէր չուանը: Հովը կը սաստկանար, բարեբաղդաբար այնպիսի ուղղութեամբ մը կը փչէր որ ինձ վստահութիւն կուտար թէ չուանը ալ աւելի մօտ կրնար գալ: Եթէ ես կարենայի քանի մը քայլ առնել ժայռին վրայ:

Կծկած վիճակի մը մէջ նստելով փորձեցի սողալ և թեթեւապէս շարժեցայ դէպի նպատակակէտը, թերեւս մէկ անգամէն մատնաչափ մը միայն, բայց ամէն մէկ շարժման կրնայի զգալ որ ետեւ եղող խորտուրտութեամբ զիս դէպի դուրս կը հրէր, և գլխովար անդունդին մէջ գլորել կ'սպառնար, եթէ այդ վայր-

կեանին վար նայէի յանկարծամահ պիտի ըլլայի, բայց գրեթէ գերմարդկային ճիգով մը իմ ակնարկս դէպ ի վեր կ'ուզէի չըրթնէրուս վրայ աղօթքով մը:

Ձեմ կրնար ըսել թէ որչափ ատեն մաքառեցայ այսպէս, բայց յոյսը ոգեւորեց զիս թէ և իմ շրթներս և կոկորդս հետզհետէ կը խանձէին: Գլուխս կը դառնար: Յետոյ յոյսը բոլորովին խոյս տուաւ, որովհետեւ ժայռին վրայ տեղ մը եկած էի որուն դուրս ցցուած մասը անցնիլը անկարելի կ'ընէր եթէ երեք ոտք ալ սողալ կարենայի չուանին հասնելու չափ մօտեցած պիտի ըլլայի:

Այսպէս ինքզինքս ազատելէ քիչ մը հեռու կը գտնուէի, և տակաւին կնքուած բանտի մը մէջ եղողի պէս փրկուելէ գործնապէս արգիլուած էի: Սարսափը տկարացուց զիս և մարելիք եկաւ վրաս, վստահ եմ որ անգիտակցութեան մէջ պիտի իյնայի և վար պիտի թաւալէի, եթէ չի խորհէի նորէն այս բառերուն վրայ «Ան՝ չպիտի հանդուրժէ որ քու ոտքերդ սահին»:

Բանի մը վայրկեան եղած տեղս կառչեցայ, Տիտանի մը ճակտին պէս դէպի իմ վրաս իջնող ժայռին ներքեւ կծկուելով: Այս միջոցին բան մը պատահեցաւ որ իմ մրմնյած աղօթքիս պատասխան մը կը թուէր: Հովը փոխուեցաւ զօրաւոր քամիի մը որ ուղղակի երեսիս կը փչէր և ո՛հ, ուրախութի՛ւն, չուանը կսկէր դէպ ի ինձ տատանել: Յափշտակուած կը դիտէի զայն որ հետզհետէ կը մօտենար, գրեթէ իմ ձեռքիս մէջ էր: Յետոյ իմ հաստատամտութեանս զօրաւոր կոչում մը ընելով, ոտքի ելայ եւ ուստում մը ըրի դէպ ի չուանը:

Աղաղակ մը ելաւ շրթներէս երբ իմ ձեռքերուս զայն բռնելը զգացի, թէ և չուանը բռնեցի սակայն անոր հետ մէկտեղ վար կը սահէի: Վա՛ր, վա՛ր, լեռնակողին զարնուելով: Սպառնադին կառչեցայ չուանին, անյուսութեան մէջ յուսալով:

Վար սահիլս դադրեցաւ և ես օդին մէջ կախուած էի: Յետոյ վեր, վեր գնաց չուանը՝ հասկցայ որ ընկերներս զիս դէպ ի կեանքը և ապահովութիւնը տանող ճամբուն մէջ դրած էին:

Յետոյ տեղեկացայ որ ընկերներս ապառաժին իյնալը տեսած էին, բայց հաւանած չէին զիս մեռածի տեղ դնելու, ենթադրելով որ ես կրնայի ապառաժին ներսիդին ըլլալ, անոնք ձգած էին չուանը նոյն դիրքին մէջ վախնալով շարժել, զայն մի գուցէ փոփոխութիւնը արգելք ըլլար ինծի քան թէ օգնութիւն մը, քանի որ եթէ կենդանի իսկ չըլլայի իմ ուր ըլլալս չէին գիտեր:

Երբ ես չուանին կառչեցայ անոնք յուսահատած էին և վայրկենաբար իրենց բռնած չուանը թուլցուցած էին, այս պատճառաւ էր որ առաջին անգամ զայն բռնելուս վար սահեցայ: Անոնք զիս լեռան վրայէն տունս բերին կենդանի է աւելի մեռած:

վիճակի մէջ եւ քանի մը օրէն վերջ էր որ ընդունած հարուածս բոլորովին հեռացաւ ինձմէ: Թէպէտ տակաւին ծեր մարդ մը չեմ, սակայն իմ ալեւոր մազերս այդ Ալպեան ապառաժին վրայ իմ ստացած փորձառութիւնս կը վկայեն, անկէ ետքը փափաք չունեցայ երբեք արծիւի հաւկիթներ հաւաքելու:

ԱՄԱՍԻԱ, Իբրանոսեան Վարժարան

Թրգմ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԻՅՈՂՈՍԵԱՆ

Տպագրիչ եւ Հրատարակիչ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱԼԻ ՃԱՏՏԷՍԻ, ԹԻՒ ՅՑ. ԻԳՏԱՄ ԼՐԱԳՐԻ ԴԷՄ

Գաւառները գլխաւոր քաղաքներու մէջ ընդհանուր ներկայացուցիչներ ունի տպարանս, որոնց կրնան դիմել տպագրական ամէն տեսակ գործեր ունեցող, եւ կամ ո՛ր եւ է գրքի մը պէտք ունեցողները, եւ փոխարժէքն անոր վճարելով, կ'ընդունին պատշաճ քանակները: Այս միջոցով իրենք կ'ազատին թէ՛ աւելորդ ծախսերէ եւ թէ՛ նամակի եւ այլ կորուստներէ. եւ ինչ որ ամէնէն կարեւորն է, փոքր գումարներու փոխադրութեան համար յառաջ եկած դժուարութիւններէն ու հոգերէն կ'ազատին:

Գաւառներու մէջ Հանրագիտակի Մեծ. Գործակալներու դիմողները կրնան սա առաւելութիւնն ալ վայելել որ, թէ՛ իրենց յանձնարարութիւնները կէտ տու կէտ կը կատարուին ամենակարճ ժամանակի մէջ եւ թէ միշտ վստահելի անձնաւորութիւն մը կ'ունենան իրենց մօտ պատասխանատու ամէն առթիւ:

ԽՄԲԱԴՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԴՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1. The first of these is the fact that the
 2. second is the fact that the
 3. third is the fact that the

4. The fourth is the fact that the
 5. fifth is the fact that the
 6. sixth is the fact that the

THE HISTORY OF THE

7. The seventh is the fact that the
 8. eighth is the fact that the
 9. ninth is the fact that the
 10. tenth is the fact that the
 11. eleventh is the fact that the
 12. twelfth is the fact that the
 13. thirteenth is the fact that the
 14. fourteenth is the fact that the
 15. fifteenth is the fact that the
 16. sixteenth is the fact that the
 17. seventeenth is the fact that the
 18. eighteenth is the fact that the
 19. nineteenth is the fact that the
 20. twentieth is the fact that the

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ Կը հրատարակուի շաբաթական 20 էջէ բաղկացեալ:

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

ԱՐԵՎԱՆ ԳԻՆՆԷ

Պոլսոյ համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պազպազեան
Գօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրկէրեան
Եւթոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրպա'ա, Միսաք էֆ. Ս. Մելգոնեան
Թալաս, Կարապետ էֆ. Գօճաեան
Թեքիթաղ, Ասատուր էֆ. Արսէնեան
Թրիպօլի Գրիգոր էֆ. Հ. Գարագաշեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիրասոն Թովմաս էֆ. Գարագաշեան
Կիւրիկ, Գրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Հալեպ, Ս. էֆ. Պօտիկեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Արժ. Տ. Գրիգոր յաճ. Թաշճեան
Մարաշ, Արժ. Տ. Նէրսէս ԲՏ. Շահինեան
Մարզուան Արամ էֆ. Գարակէօյեան
Միացեալ-Նահանգներ, Մ. Մ. Քարակալուրեան և Ընկ.
Նիկովրդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Նիսաս, Յովհաննէս էֆ. Փանոսեան
Շապին Գարա հիսար. — Գազիկ էֆ. Օզանեան
Սամսօն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սըվազ, Միհրան էֆ. Իսպիրեան
Տրապէֆի, Լեւոն էֆ. Սրապեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան